

120
+278#
Վ. Ի. ԲՈՅԿՈՎ

194.

ԱՅԾԸ ԱՂԲԱՏԻ ԿՈՎՆ Ե



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - Ի.

ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

«ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ»-Ի

ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Ուղեցույց անտառային աշխատանքի 50 է.
2. Ս. Շաղունց.— Մեր անելիքները (սպասված) 20 »
3. Հ. Փիրումյան յեվ Ս. Մելիքյան.— Ինչպե՞ս
ձևանալու յի գործարանում լուրդ և շվեյց.
պանիր պատրաստելը 3 »
4. Հ. Փիրումյան.— Խոտաբույսերը և նրանց
մշակութային յեղանակները (սպաս.) 10 »
5. Խ. Ս. Վաղվաթյան.— Հ. Խ. Ս. Հ. Հողային
Որենագիրքը, բացատրական հարց ու պա-
տասխաններով. մասն առաջին, աշխատավո-
րական հողդատագործություն (սպասված) 40 »
6. Պ. Հեֆիմյան.— Թիֆնու մշակությունը 10 »
7. Պ. Հեֆիմյան.— Շերամի վորգը, նրա կերա-
կրելն ու խնամքը 10 »
8. Խ. Ֆերիցյան.— Կաթնատնտեսության գործ-
նական ձևանարկ, մասն առաջին (64 նկ.) 1ռ. 50 »
9. Կ. Մելիք-Շահնազարյան.— Ծխախոտի մշա-
կությունը 20 »
10. Ս. Ֆերիցյան.— Տասը պատգամ անտառապահին 20 »
11. Խ. Ֆերիցյան.— Անհատական, թե՛ կոոպ. կաթ-
նատնտեսություն 10 »
12. Հ. Հարություն.— Բատրակ, կնքի պայմա-
նագիր (չափածո) 5 »
13. Մ. Թումանյան.— Շարքացանքը և նրա նշա-
նակությունը 15 »
14. Խ. Տեր-Ներսիսյան.— Ինչպե՞ս մշակել խա-
ղողի ալկիները (28 նկարով) 35 »
15. Ֆերենհերզ դեպի գյուղ.— Անդրկովկաս-
յան Ֆերկրային կոմիտեի բանաձևը գյու-
ղացիական հարցի մասին, Ս. Շաղունցի
նախաբանով (սպասված) 14 »
16. Հայաստանի Կոմունիստական Կուսակցու-
թյան Կենտրոնական Կոմիտեի Չորրորդ
Պլենումի Բանաձևերը (սպասված) 15 »

Վ. Ի. ԲՈՅՅՈՎ

ԱՅԾԸ ԱՂԲԱՏԻ ԿՈՎՆ Ե

Ռուս. փոխադրեց Գ.Ա.Բ. ՀԱԿՈԲՅԱՆ



ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1927

Գրառնակար № 204 ր.

Տիրաժ 1000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—557



11-239819

ԱՅԾՆ ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ ՊԱՀՈՒՄ

Այժր պահոււմ են՝ կաթի, մսի, մագի, դվթի կի, (աղ-վաժաղ), մորթու և կաշվի համար:

Պատերադրից առաջ Ռուսաստանում 6 միլիոն գը-լուխ այժ կար, իսկ 1924 թվականին՝ մոտ 4 միլիոն:

1926 թվի համառուսական գյուղատնտեսական վի-ճակագրութիւնը ցույց տվեց, վոր մեզանում պահվող ալ-ծերի ընդհանուր թվի ⁹/₁₀-ից ավելին գյուղացիներին և պատկանում:

Մեր գյուղացիներն այժր գլխավորապես կաթի ու մսի համար են պահում: Բացի կաթից ու մսից, ոգտա-գործվում և նաև այժի մորթին՝ կաշվի կամ մուշտակե-ղենի համար:

Այժի մորթուց կարելի յե պատրաստել զանազան մուշ-տակներ և զանազան տեսակի կաշիներ:

Բացի կաշվից ու մուշտակեղենից մեծ արժեք ունի նաև այժի դվթիկը, վորից զանազան գործվածքներ են պատրաստում:

Սակայն այժի գլխավոր արժանիքն այն և, վոր նա, իբրև կաթնատու, բանվորական մանր տնտեսության հա-մար շատ գնահատելի կենդանիներից մեկն է:

Կովի համեմատությամբ, այժն առանձին ծախք, խը-նամբ ու կեր չի պահանջում, բայց համեղ, սննդարար ու առատ կաթ և տալիս: Փոքրիկ հողամասերում պահելու համար այժն ավելի հարմար և, իբրև կաթնատու կենդա-

նի և որը-որին ավելի ու ավելի յե գրավում բանվորների ու սակավահող գյուղացիների համակրանքը:

Բայց վորովհետև մինչև որս մեղանում այժի վրա նայել են իբրև անշահավետ մի կենդանու վրա և կաթնատու այժ պահելու վրա հարկավոր ուշադրություն չեն դարձրել, այդ պատճառով կաթնատու այժարուծությունը մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում, ուրիշ յերկրների համեմատությամբ, թույլ է զարգացած և բնակչության մեծ մասը այժին, վորպես գյուղատնտեսական արդյունավետ կենդանու՝ համարյա բոլորովին ծանոթ չի:

ԻՆՉ ԿԱՐՈՂ Ե ՏԱԼ ԱՅԾԸ

Այժը վորպես կարճատև կենդանի

Ընտանի այժը, ինչպես և կովը, ամենալավ կաթնատու կենդանիներից մեկն է:

Չնայած իր փոքր հասակին ու քաշին, այժն իր կաթնատուությամբ շատ քիչ է հետ մնում գյուղական սովորական կովերից, վորոնք տարեկան միջին հաշվով 600—700 լիտր*) (50—60 դույլ) կաթ են տալիս:

Այսպես, նույնիսկ մեր տեղական հասարակ այժը (վոր սակավ արդյունավետ է համարվում) խնամքի ու պահպանություն անենասովորական պայմաններում տատարեկան 250—400 լիտր կաթ է տալիս, իսկ լավ կերակրելու և պահելու դեպքում՝ 400—600 լիտր:

Ազնվացեղ այժերը պահպանություն լավ պայմաններում տարեկան 500-850 լիտր կաթ են տալիս: Քիչ չեն աճն տեսակի այժերը, վորոնք 950-1100 լիտր և գեռ ավելի կաթ են տալիս:

Այսպես որինակ, պատերազմից առաջ, Լենինգրադի նահանգում կային Շվեյցարիայից բերած այժեր, վորոնք տարեկան մոտ 1100 լիտր կաթ էին տալիս:

*) Մեկ լիտրը հավասար է 1 ու կես շի:

Միջին հաշվով, այժերի տարեկան կաթն այդ նահանգում 500 լիտրի յեր հասնում:

Այն յերկրներում, ուր այժարուծությունը զարգացած է, գտնում են, վոր լավ պայմաններում պահելու դեպքում, 2—3 տարեկան այժերի միջին կաթը պետք է լինի տարեկան 700 լիտր, իսկ որեկան 4—6 լիտրից վոչ պակաս:

Գերմանիայում, որինակ, այժարուծները գտնում են, վոր ազնվացեղ այժերը, լավ կերակրելու դեպքում, տարեկան հետևյալ կիթը պետք է տան. մեկ ծին այժը 600 լիտր, յերկու ծինը՝ 700 լիտր, յերեք ծինը՝ 800 լիտր:

Այժի կարք

Այժի կաթն իր համով ու անդարությամբ կովի կաթից հետ չի մնում: Այժի կաթ գործածողների կարծիքով այս կաթն իր յուղալիությամբ գերազանցում է կովի կաթին: Այժի կաթի յուրահատուկ համի և հոտի մասին կարող են խոսել միայն այդ կաթին անսովոր մարդիկ: Հոտը հատուկ է բացառապես արու այժին. եզ այժն ու նրա կաթը հոտ չունեն:

Եզ այժը, արվից առանձին ու մաքուր պահելու դեպքում, թե ինքն այժը և թե իր կաթը վոչ մի հոտ չեն ունենում: Այժի կաթը, թե իր տեսքով ու թե իր համով կովի կաթից միայն փորձված մարդը կարող է դանազանել:

Հաճախ պատահել է, վոր այժի կաթը վոչ թե իբրև այժի կաթ է ծախվել, այլ իբրև կովի կաթ և սպառողներն ել միանգամայն գոհ են մնացել:

Կովի կաթի հետ համեմատած, այժի կաթը քիչ քապիտակ է, յուղալի և սպիտակուցով ու աղերով*) հարուստ:

Բացի այդ, այժի շոռը (թանի կտրվածքը) ավելի փափուկ է, յուղի գնդիկները մանր են և կաթի մեջ հա-

*) Կաթի ամենագնահատելի բաղադրիչ մասերը:

վտարապես տարածված: Այս պատճառով ել այժի կաթի
յերեսից սերը լավ չի համարվում: Իր այդ հատկություն-
ների շնորհիվ այժի կաթը կովի կաթից հեշտ ե մար-
սվում, մի հանգամանք, վոր առանձնապես կարևոր ե ծծի
յերեսաներին կերակրելու և ստամոքսային հիվանդու-
թյունները բժշկելու ժամանակ:

Թույլ, ֆիզիքապես չամրապնդված, որինակ՝ վաղա-
ծին յերեսաներին, վորոնք տառապում են զանազան հի-
վանդություններով, լուծով և այլն, այժի կաթով բժշկե-
լը նույնպես փայլուն հետևանքներ ե տալիս:

Հեշտամարս ու աղերով հարուստ լինելով, այժի կա-
թը սննդաբար ե: Հաճախ զանազան հիվա դություններ
բժշկելու համար՝ այժի կաթի տված դրական հետևանք-
ները պատճառ են դարձել այդ կաթին բուժիչ հատկու-
թյուններ վերագրելու:

Այժի կաթը կարելի յե նաև գործածել հում վիճակում,
առանց տաքացնելու կամ յեռացնելու վորից կաթը
կորցնում ե իր ամենագնահատելի հատկությունները:

Այժի կաթը, բացի հում գործածելուց անտեսական
զանազան կարիքների համար, ինչպես որինակ, խմելուց,
յերեսաներին կերակրելուց, թելի, սուրճի հետ խառնե-
լուց և այլն, նրանից, ինչպես և կովի կաթից, պատրաս-
տում են շոռ, պանիր, յուղ, հումսի, կեֆիր և այլ կաթ-
նամթերքներ:

Այժի կաթից պատրաստած պանիրը շատ համեղ ե և
լավ գին ունի թե ԽՍՀՄ-ում և թե արտասահմանում և
շուկայում լավ գնով ե ծախվում: Այժի շոռը փափուկ ե
ու համեղ ու կովի շոռի հետ հավասարապես գործադր-
վում ե կերակուրների համար, իսկ հումին առանձնապես
ոգտավետ ե: Այժի լոռը փափուկ ե ու համեղ և կովի շո-
ռին հավասար ուտվում ե, իսկ հումին ավելի ևս ոգտա-
կար ե:

Այն անտեսություններում, վորտեղ կովի կաթից ամ-
բողջապես յուղ ու պանիր են պատրաստում, այժի կա-
թը, բացի այն, վոր նրանից կերակուրներ են պատրաս-
տում, խմեցնում են նաև ագնվացեղ ու մսացու հորթե-
րին, վորոնք մեծ չափով կաթի կարիք ունեն:

Այս նպատակով Շվեյցարիայի, Ավստրիայի ու Գեր-
մանիայի գյուղական շատ անտեսություններում, բացի
կովից, 2-4 հատ կթի լավ այժ են պահում:

Թե վորքան բարձր ե գնահատվում այժի կաթը, յե-
րևում ե շուկայում նրա ունեցած մեծ արժեքից: Արտա-
սահմանում, պատերազմից առաջ, այժի կաթի յուրաքան-
չյուր շիշը ծախվում եր 10-12 կոպ., Ռուսաստանի նա
հանգական բաղաճներում՝ 15-20 կոպ., Մոսկվայում՝ 20.30
կոպ., Լենինգրադում՝ 40.50 կոպ.:

Այժը վորպես մսացու

Այժը, վորպես մսացու, վոչխարից քիչ ե հետ մնում:
Սովորաբար, մսի համար անպետք ճանաչված այժեր ու
ամորձատած (կոտած) ուլեր են մորթում: Բավարար կե-
րակրելուց, ուլերը մինչև աշուն մեծանում են և ամառն
արոտներում լավ գիրանում: Մորթելու ժամանակ, հոկ-
տեմբերին, նոյեմբերին, մատղաշ՝ 6-8 ամսական ուլից 12-
ից մինչև 16 կիլոգրամ (30-40 ֆունտ) համեղ, վոչխա-
րի մսից քիչ տարբերվող միս ե ստացվում. մեծ այժից
16-25 կիլոգրամ միս ե ստացվում:

Ամենալավ, փափուկ միսն ստացվում ե կաթով կե-
րակրած՝ 6—8 շաբաթական ուլերից, բայց այս հասակում ու-
լերը միայն այն դեպքում են մորթում, յերբ հետազայում
նրանց պահելը ձեռնառու չի լինում, որինակ՝ արոտատե-
ղեր չլինելու պատճառով:

Այժի միսը, ինչպես առհասարակ բոլոր մսերը, կա-
րելի յե յեփել, տապակել, այլև ապուխտել, աղը դնել,
«ղափուրմա», մսի սուջուխ և այլն պատրաստել: Այժի մը-

սից ու նրա արյունից կարելի չե նաև յերշիկ պատրաստել:

Այծի միսն ել կաթի պես հոտ չունի: Հոտը հատուկ է միայն արուններին և կաշու՛մ է մսին միայն այն ժամանակ, յերբ մաշկելիս անզգուշաբար ձեռքերը մորթուն կաշեկուց աղտոտվում են, ուստի մաշկելիս անհրաժեշտ է առանձնապես զգուշ լինել: Ամորձատված ու կթի այծերի մորթին հոտ չի ունենում:

Այծերի ճարպը բացառապես ներքին է, ստամոքսային (փորի ճարպ)՝ կաշվի տակը ճարպ չկա: 7-8 ամսական ուլ մորթելուց 4-5 կիլոգրամ մ հալած ճարպ է ստացվում. ավելի մեծից՝ 5-8 կիլոգրամ է ստացվում: Այծը կեր ու խնամք քիչ է պահանջում, բայց ավելի արդյունք է տալիս, քան վոշխարը:

Այծաբուծության և մրերենեց ու ցրանց գործածությունը

Այծի զվթիկը՝ Նույնիսկ տեղական հասարակ այծեր պահելիս, տարեկան ամեն մեկից 100 — 250 կիլոգրամ մ զվթիկ կարելի չե ստանալ, վերի մաքրած տեսակի կիլոն 10-25 ուրլի չե գնահատվում:

Դվթիկը սանդերբով զգում են և ապա զանազան գործվածքներ պատրաստում. որինակ՝ թաշկինակ, շալ, ձեռնոց, գուլպա, կտորեղեն, գլխարկ և այլն:

Ռուսաստանում, Որենբուրգի նահանգում գյուղացի կանայք այծի զվթիկից գործում են Որենբուրգի հայտնի թաշկինակները, կապիկները, շալերը, վորոնք հսկայական սպառում ունեն վոշ միայն Ռուսաստանում, այլև արտասահմանում:

Մեզնում՝ Կովկասում և Թուրքեստանում այծի զվթիկից շատ տաք և փափուկ կտորներ են պատրաստում: Ընդհանրապես այծի զվթիկից պատրաստած ապրանքները շատ են գործածվում և լավ գնով են վաճառվում, վո-

րովհետև աչքի չեն ընկնում իրենց տաքությամբ, փափուկությամբ ու թեթևությամբ:

Այծի զվթիկից պատրաստում են շատ տաք և փափուկ կտորներ:

Այծի մազից պատրաստում են զանազան գործվածքներ՝ գորգեր, խոզանակներ, յափնջի, գդակ և այլն: Առանձնապես գնահատելի չե այծի մորուքի մազը: Սրանից վարսավիճների համար ընտիր խոզանակներ են պատրաստում:

Այծի մորթուց պատրաստում են մուշտակեղեններ և կաշի, վորոնք լայն սպառումն ունեն թե ԽՍՀՄ-ում և թե արտասահմանում:

Պատերազմից առաջ, չմշակված մորթու համար (վորը վերամշակելու համար մեծ մասամբ Գերմանիա չեր ուղարկվում) մեծաքանակ գնորդները հատին 1 ու. 50 կ. ից մինչև 2 ու. 50 կ. ելին վճարում, նայած մորթու մեծությանն ու հատկությանը:

Այծի կաշին լիքն է, թանձր, ամուր ու առանձնական. նրանից պատրաստում են կոշիկեղենի յերեսներ՝ խլրոմ, շերտ, սեկ, իսկ մատղաշների կաշվից՝ զանազան ձեռնոցներ և յերեսաշացուններ. որինակ՝ զամշ, լայկ, սեկ:

Բացի այդ, այծի մորթուց պատրաստում են տաք, ամուր անթափանց հագուստներ-բաճկոններ և անդրավարտիկներ, վոր վելջին ժամանակներս մեծ շափերով գործ են ածում կարմիր բանակալիներն ու ավտովարները (շոֆերները):

Այծի ազբը: Բացի վերը հիշված մթերքներից, այծը լավ վորակի գոմաղբ է տալիս, վորը պարտեզների ու բանջարանոցների համար լավ պարարտանյութ է:

Կարող է, արգյո՞ւ, փոքր սեռեսուրյան մեջ այծը կովին փառի՞նել

Անցնելով այն հարցին, թե կարող է, արդյո՞ք, փոքր անասության մեջ այծը փոխարինել կովին, առանց այլ-

հայրության պիտի ասենք՝ այս կարող է և անհասկած տնտեսության համար շատ ձեռնտու լինի:

Վերևում արդեն ասացինք, վոր գյուղական կովերը տարեկան միջին հաշվով 600-700 լիտր կաթ են տալիս: Բայց քիչ չեն պատահում ախպիսի կովեր, վորոնք տարեկան 250-300 լիտրից ավելի կաթ չեն տալիս, այսինքն այժման վորքան անխնամ պահվող տեղական հասարակ այծն և տալիս:

Իսկ աղնվացեղ այծերը, ինչպես ասված է, 700—800 լիտր կաթ են տալիս, այսինքն, վորպես կաթ արտադրողներ, բոլորովին հետ չեն մնում գյուղական միջակ կովերից: Ուստի, բոլոր այն տնտեսութունների համար, վորոնք մեծ հողամասեր չունեն, ուր տեղի ու կերի պակասության պատճառով կով պահելը դժվար է կամ բոլորովին անհնարին, այժմ չափազանց ոգտավետ կենդանի լին:

Այժ պահել կարող են նույնիսկ ամենաաղքատ ընտանիքները, վորովհետև այժմ մի քանի անգամ է թանկ և կովից և 5-6 անգամ քիչ կեր պահանջող:

Մանր տնտեսութուններում այժն անվտանգություն է կաթնատու կենդանի լին, վոր քիչ խնամք ու ծախք պահանջելով, իր աված մթերքներով ամբողջ ընտանիք կարող է կերակրել ու հագցնել:

Ահա թե ինչու գերմանացիք այժին «աղքատի կով» են ասում և ահա թե ինչու Գերմանիայի, Ավստրիայի ու այլ յերկրների բանվորական բոլոր շրջաններում կթի աշխատեցնելով կովերի ու ավելի չի զարգանում և կթի այծերի թիվը տարեցտարի բազմանում:

Մեր պայմաններում կաթնատու այծերից պահելու համար ամենաօգտավետը հետևյալներն են.

1. Տեղական հասարակ այժը.
2. Շվեյցարական այժը.
3. Ալպյան այժը.
4. Անգորական այժը:

ՏԵՂԱԿԱՆ ԱՅԾԸ

Տեղական հասարակ այժն ամենաեղածն, ամրակազմի ու առողջն է և միևնույն ժամանակ քիչ կեր ու խնամք պահանջողը. վոր վաղուց ընտելացած է մեր խիստ պայմաններին: Լավ պայմաններում, կաղնվածքով, արդյունավետությամբ ու շուտ հասունանալու տեսակետից տեղական հասարակ այժը գրեթե հետ չի մնում շվեյցարական այծերի ամենահայտնի ցեղերից և միանգամայն արդարացնում է իր վրա արած ծախքերը:

Տեղական հասարակ այժ ամեն տեղ ել կա:

Ներկայումս տեղական այժն ամեն տեղ միատեսակ չի և այդ վրիժ թե զանազան գավառներում, այլ նույնիսկ նույն գավառում պահվող այծերն իրարից խիստ տարբերվում են: Միևնույն հոտի մեջ պատահում են թե յերկարամազ այծեր, մեծ, դեպի հետ գնացած յեղջուրներով և թե կարճամազ, համեմատաբար փոքր, դեպի վեր ցցված յեղջուրներով և բազմապիսի գույներով՝ սպիտակ սև, մոխրագույն, շեկ, խայտաբղետ և այլն:

Հասակը և քաշը. — Ֆիզիքապես լավ զարգացած, 2-3 տարեկան տեղական այժը նույնպես, ինչպես և հասակակից շվեյցարականը, 48-65 կիլոգրամով կամ միջին հաշվով 50 կիլոգրամով պետք է կշռի և հետևի մասի բարձրությունը 70, 76 սանտիմետր (մոտ 1 արշին) պետք է լինի:

Հասարակ այժի կաթնատվութունը, սովորական կերպով պահելու դեպքում, տատանվում է 1-2 լիտրի (1 ու կեսից 3 շի) միջև որականը, կամ՝ 250-400 լիտրի՝ տարեկանը: Պահելու և կերակրելու պայմանները բարելավելիս, հասարակ այժի կաթը բավականին ավելանում է և ֆիզիքապես լավ զարգացած 2-3 ծին այժի կաթնատվութունը հասնում է որական 2 ու կեսից 4 լիտրի, կամ՝ տարեկան 400 600 լիտրի:

Այս պայմաններում տեղական լավ այծերն իրենց կաթնատուությամբ բոլորովին հետ չեն մնում շվեյցարական այծերից փոքրնք տարեկան միջին հաշվով 500 — 600 լիտր կաթ են տալիս:

Կանոնավոր խնամքի ու պահպանության դեպքում, տեղական այծի կաթնատուության ժամանակաշրջանի տեվողությունը քիչ և տարբերվում շվեյցարական այծերի կաթնատուության ժամանակաշրջանից:

Շվեյցարական այծերը միջին հաշվով 300 ու կամ 10 ամիս են կթվում:

Սովորական ձևով պահելուց, տեղական այծերի կաթնատուության ժամանակաշրջանը 5-6 ամիս է տևում: Այդ պայմաններում տեղական այծը, ծնած որից մինչև նորից բեղմնավորվելը կամ մինչև ցուրտն ընկնելը, կթվում է: Անհրաժեշտ է նշել, վոր այծը ձմեռը վորքան շուտ է ծընում, այնքան էլ սրա կթվելու ժամանակաշրջանը յերկար է լինում և ընդհանրապես՝ զարնանը վորքան ուշ է ծնում, այնքան էլ այդ ժամանակաշրջանը կարճ է լինում:

Ընդհանուր առմամբ, կարելի չէ ասել, վոր խնամքի ու պահպանության միանման պայմաններում տեղական և շվեյցարական այծերի թե կաթնատուությունը և թե կըթելու ժամանակաշրջանի տևողությունը հավասար կլինի:

Տեղական այծի կաթը. — Այծն ու կաթի ամանը մաքուր պահելուց՝ տեղական այծի կաթը վոչ հոտ է ունենում և վոչ էլ անախորժ համ և աչքի չէ ընկնում իր բարձր վորակով, իսկ շատերի կարծիքով, իր յուղալիությամբ նուրիսկ գերադանցում է շվեյցարական այծերի կաթին:

Սխալ է այն կարծիքը, թե յեղջերավոր այծը անյեղջուր այծից (բոլիկից) վատորակ ու քիչ կաթ է տալիս և այլն, վոր յեթե այծի գլխից հոտ է գալիս, ապա սերնան սրա կաթից էլ է հոտ գալիս. — այսպես կարող են

կարծել միայն բանից անտեղյակ մարդիկ: Այծի անյեղջուր լինելն ու գուշնը կաթի բանակի ու վորակի վրա վոչ մի ազդեցություն չունեն:

Յեղջերավոր սև կամ խալաբդետ (չալիկ) այծերը լավ կիթ ունեն և այնպիսի բարձր վորակի կաթ են տալիս, ինչպես անյեղջուր այծերը: Ինչ վերաբերում է գլխի հոտին, այդ հատուկ է միայն արուններին և այն էլ բեղմնավորման շրջանում: Իսկ այծից առհասարակ հոտ չի գալիս. սովորաբար հոտ է գալիս այն ժամանակ, յերբ կեղտոտվում է արվի հետ միասին պահելուց: Ուստի այն բոլոր անտեսությունները, վորոնք կթի այծեր են պահում, սովորաբար արուններին առանձին տեղ են պահում:

Ռուսաստանի տեղական այծերը հաճախ տարեկան 2 ուլ են ծնում, սակայն պատահում են 3 և նույնիսկ 4 ուլ ծնող այծեր: Հաճախ առաջին անգամ ծնելուց հետո, 5 ու կեսից 6 ամիս անց յերկրորդ անգամ ծնում են նույն թվով ուլեր: Այսպիսի դեպքերում այծը, հաճախ, ընդամենը ծնում է 4-7 ուլ, վորոնք մեծանում են բացառապես մոր կաթով, մի հանգամանք, վոր ապացուցում է հասարակ այծերի լավ կաթնատուությունը:

Ռուսական տեղական այծի տարեկան ծնած ուլերի քանակն ու բանի անգամ ծնելը կախված է լավ արտադրողներից (նոխագներից), վորոնք առողջ և ֆիզիքապես լավ զարգացած պիտի լինեն:

Տեղական այծերի մեծ մասը ծնում են ձմրանն ու զարնանը՝ դեկտեմբերից մինչև ապրիլ: Երկրորդ անգամ ծնում են, յեթե այդպիսին տեղի չէ ունենում, առաջին ծնունդից 5 ու կեսից 6 ամիս հետո — հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին: Այծերի մեծ մասը փետրվար — մարտ ամիսներին են ծնում:

Բեղմնավորումը մեծ մասամբ լինում է ազատ ու մասսայական և տեղի չէ ունենում ծնելուց 5 ամիս առաջ, հուլիսի վերջերից մինչև դեկտեմբեր:

Թե տեղական և թե շվեյցարական այծի վաղահասությունը միանման է: Լավ կերակրելուց տեղական ուլերն արագ են զարգանում: 7-8 ամսական ժամանակ զըրեթե մեծ կենդանիներ են դառնում, բեղմնավորվում են ու տարվա վերջին արդեն ծնում: Հաճախ, յեթե այծը 1 կամ 2 արու ուլ է ունենում և նրանք մոր ծծով են կերակրվում, այնքան են հասունանում, մանավանդ տեղական ուլերը, վոր 8-10 ամսական հասակում իրենց մորից անցնում են:

Թե տեղական և թե շվեյցարական այծի միսը միևնույն վորակն ունեն: Արագ ու լավ վաղահասության հետ հասարակ այծը միմիայն արածելով է լավ կերակրվում (վոր առանձնապես զնահատելի չե), փափուկ միս է տալիս և ընդհանրապես, իբրև մսացու կենդանի, վոր միայն հետ չի մնում, այլև շնորհիվ իր սակավապետության, նույնիսկ գերազանցում է շվեյցարական այծերին:

ՇՎԵՅՑԱՐԱԿԱՆ ԱՅԾԸ



Շվեյցարական, դաանենյան կամ գաանենյան ալյան այծը սպիտակ, առանց յեղջյուրի, կարճամազ կենդանի չե: Նրա կենդանի քաշը մոտ 50 կիլոգրամմ է: Հաճախ պատահում են ավելի խոշորները, վորոնց քաշը մինչև 80 կիլոգրամմի չե հասնում, իսկ արունները մինչև 100 կիլոգրամմ:

Չաանենյան այծերն աչքի լեն ընկնում իրենց լավ, հեղ բնավորությամբ ու կապված են տերերի հետ, և այնտեղ, ուր այդ ցեղին պատկանող այծեր են պահում, բացի կթելուց, նրանց խնամքն ամբողջապես ընկած է հաճախ 6-8 տարեկան հասակի յերեխաների վրա:

Չաանենյան այծերի հեղ բնավորությունը և այն հանգամանքը, վոր նրանց կարող են պահել նույնիսկ յերեխաները, նրան դարձրել են բնավորական ընտանիքների սիրած կաթնատու կենդանին:

Շվեյցարական այծերի կաթնատվությունը վաղուց արդեն մանրամասն կերպով հետազոտված է և այդ մա-

սին վոչ մի կասկած չկա: Վորպես կաթնատու կենդանի, զաանենյան այծը ԽՍՀՄ-ում կաթնատու այծերի մեջ առաջնակարգ տեղերից մեկն է բռնում:

Այդ այծն որեկան 2—5 լիտր կամ տարեկան 500—850 լիտր կաթ է տալիս: Հաճախ այնպիսի այծեր են պատահում, վորոնց կաթնատվությունը լավ խնամելու դեպքում որական հասնում է 5-8 լիտրի կամ տարեկան 800-1200 լիտրի:

Կաթնատվության շրջանը միջին հաշվով 300 որ կամ 10 ամիս է տևում. ցամաքելու շրջանը՝ 60 որ կամ 2 ամիս:

Ցեղական նշանակութունը. — Ջաանենյան այծը ցեղն ազնվացնելու համար հրաշալի կենդանի է: Ջաանենյան արուններով բեղմնավորում են տեղական հասարակ այծերին՝ նրանց ազնվացնելու և նրանց կաթնատվությունը բարձրացնելու համար:

Ջաանենյան այծերը ինչպես ԽՍՀՄ-ում, նույնպես և Շվեյցարիայում շատ թանգ են: Պատերազմից առաջ Ռուսաստանում այդ այծերի հատը 20—50 ուլբլով էր ծախվում:

ԱՆՂՅԱՆ ԱՅԾԸ

Այս այծը շագանակի գույն ունի և շատ տարածված է Շվեյցարիայում և Իտալիայում: Ինչպես չերեում ենրկարից, շատ սիրուն և նուրբ կազմվածք ունի, թեթեզված, կարճ վզով և լայց կրծքով: Այս այծը շատ համապատասխան կլինեք մեր լեռնոտ չերկրին, քանի վոր նա գուտ լեռնային ցեղի այծ է: Կաթնատվությամբ հետ չեն մնում զաանենյան այծերից: Այսպես այծը զուգավորելով մեր տեղական այծերի հետ՝ աեղի տեսակները կարելի է զգալի չափով լավացնել:



ԱՆԳՈՐԱԿԱՆ ԱՅՏ



Յուր արդյունավետությամբ Անգորական այծն ամենագոտավետը պետք է համարել: Նրա հայրենիքը Փոքր-

Ասիան է և լավորակ լինելու պատճառով, մասնավորապես մազի համար՝ շատ տարածված է վոչ միայն Ասիայում, այլ և Յեվրոպայում և նույնիսկ Ամերիկայում ու Ավստրալիայում:

Անգորական այծը շատ սիրուն է և իր յերկար, մետաքսանման, խուճուճ և շատ կակուղ մազով բարձր է գնահատվում: Ամեն մի այծից տարեկան 10—12 ֆունտ մազ է ստացվում: Անգորական այծի կենդանի բաշը $2\frac{1}{2}$ —3 փութ է, արուինը՝ մինչև 4 փութ: Կաշին շատ նուրբ է և արժեքավոր: Անգորական այծը վորպես մսացու լավ է գնահատվում և նրա միսն իր համով ու ճարպով քիչ է տարբերվում վոչխարի մսից: Նրա մազը շատ թանկ է գնահատվում և գործ է ածվում թանկարժեք գորգեր և նրման ուրիշ գործվածքներ պատրաստելու համար: Պետք է ասել, վոր այծերի վոչ մի ցեղ այնքան նուրբ և այնքան առատ մազ չի տալիս, վորքան անգորականը: Պատերազմից առաջ Անգորայից տարեկան 63 հազար փութ մոտ 4 միլլիոն ուրբի արժողությամբ այծի մազ եր արտահանվում Յեվրոպա:

Անգորական այծերը ցրտի դիմանում են, իսկ խոնավության՝ վոչ: Այդ պատճառով մեր պայմաններում այդ այծերը կարող են լավ զարգանալ և ոգտակար լինել մեր գյուղացուն:

Պատերազմից առաջ անգորական այծ մեծ քանակությամբ պահում էին Կարսի շրջանում և Ռուսաստանի մի քանի հարավային նահանգներում:

Իր այս աչքի ընկնող լավ հատկություններով հանդերձ, անգորական այծը այնքան էլ կաթնավետ չի. սրական 2 շնից ավել կաթ չի տալիս, սակայն տված կաթը շատ յուղ է պարունակում:

Այծերի ցեղեր շատ կան, սակայն մեր պայմաններում այստեղ թվածները ոգտակար կարող են լինել:

ԿԹԻ ԱՅԾԵՐ ԸՆՏՐԵԼՆ ՈՒ ՊԱՅԵԼԸ

Կթի այծի ընտրութիւնը գնելու ժամանակ Կթի այծեր ընտրելու և գնելու ժամանակ գլխավորապէս ուշադրութիւն պետք է դարձնել, վոր այծն առողջ, ամրակազմ, լավ զարգացած ու կաթնավետ լինի:

Այս կամ այն ցեղին պատկանելն առանձին նշանակութիւն չունի, վորովհետեւ կաթնատուութիւն վրա գըլխավորապէս ազդում են կերակրելու և պահելու պայմանները. այդ պայմաններից ել կախում ունեն լավ կիթ ունեցող թե՛ արտասահմանյան և թե՛ մեր տեղական այծերը:

Կթի այծն աշխույժ տեսք պիտի ունենա և բավականաչափ գեր լինի. առողջ, լավ զիրացած այծի մազը՝ կոկ փայլուն, փափուկ և վողջ մարմինը հավասարապէս ծածկող պետք է լինի: Կենդանու մարմնի ու կրծի վրա վոշ մի վերք, պալար և նման բաներ չպետք է լինեն: Կենդանու ըթից լորձուկը և թարախ չպետք է հոսի. այծը պետք է ունենա մարմնի կտր ձև, լայն ու խոր կուրծք, ուղիղ վտերեր, ամուր կճղակներ ու չպետք է կաղա:

Կուրծք պետք է լինի լիք, մեծածավալ, գեղեցիկ, տանձաձև, յերկու հատ լավ զարգացած և մի բիշ դեպի առաջ ու դեպի կողքերը ուղղված պտուկներով:

Հաճախ պատահում են այնպիսի այծեր, վորնոց յերկու մեծ պտուկներից բացի վերևում յերկու մանր, չզարգացած պտուկներ ել են լինում, վորը շատերը լավ կաթնատուութիւն նշան են համարում: Ինչպես տեղական, այնպես և շվեյցարական այծի կուրծք յերկար, տուրակաձև, քայլելու ժամանակ այս ու այն կողմը ճոճվող չպետք է լինի. այդպիսի կուրծ հաճախ պարավ այծերն են ունենում և այդ արատ պետք է համարել: Փոքր-կարճ պտուկները նույնպէս արատ պետք է համարել, վորովհետեւ այդպիսի պտուկները դժվար են բռնվում և կիթը ժամանակ շատ է խլում: Անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել նաև այն

բանի վրա, վոր այծը կիթելու սովորած լինի և կիթելիս հանգիստ կանգնի:

Մեծ նշանակութիւն ունի նաև այծի հասակը: Ամենից լավը՝ 2-3 ծին այծն է: Այս շրջանում այծերը սովորաբար կաթը շատացնում են: Կարելի չէ գնել նաև մեկ ծին այծ, վորովհետեւ հետագայում նա կաթը կշատացնի:

Կաթնավետութիւնը սովորաբար վորոշվում է այսպես ասած՝ «փորձնական կիթով»: Ամիսը յերեք անգամ, կամ ավելի լավը՝ որական կաթը կշռում կամ չափում են վորեւ չափով ու հիշողութիւն համար գրում տետրի մեջ: Յերեք որվա ընթացքում ստացած թվերը գումարում են և բազմապատկում 10-ով, վորով և վորոշում են այծի ամսական մոտավոր կաթնատուութիւնը:

Կաթը կարելի չէ նաև «չափի գավաթով» չափել: Չափի գավաթները պատրաստվում են անագած (կլայեկած) պղնձից կամ ապակուց: Նրանք լինում են մեկ լիտրանոց, տասնորդական մասերի բաժանված փայտեր են ունենում, վորոնք կիթը վորոշելու համար շատ հարմար են:

Կիթը կարելի չէ չափել նաև այլ չափով, որինակ՝ բաժակով, բայց ցանկալի չէ վոր չափը շարունակ մեկ լինի:

ԻՆՉՊԻՍԻ ԾԵՆՔԵՐՈՒՄ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՅԾ ՊԱՅԵԼ

Այծը կարելի չէ պահել ամեն մի շենքում՝ ախոռում կամ հատկապէս շինված գոմում, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, վոր շինութիւնը լինի լուսավոր, փաքուր, չոր և բավարար տաքութիւն ու միջանցիկ քամիներից ազատ:

Փոքր տնտեսութիւնների ախոռների սովորական պակասութիւնն է՝ մթութիւնն ու ցուրտը: Չմեռը, շատ ձյուն չեկած ժամանակ, յերբ այծերն անընդհատ ախոռ-

ներում են պահվում, մթությունն ու ցուրտն ազդում են նրանց արտադրողականության վրա. նրանց պահելը դժվարանում է:

Վերոհիշյալ պակասություններից խուսափելու համար, լեռնային ցուրտ շրջաններում ախոռներն, ըստ հնարավորության, ամուր և լավ շինված պետք է լինեն, պատերը ներսի ու դրսի կողմից 2 մետրից (3 արշ.) վոչ պակաս բարձրությամբ, լավ սվաղած, մաքուր 6—10 սանտիման շերտությամբ (Ռեոմյուրով): Իսկ յեթե ախոռները փայտաշեն են, նրանց պատերը պիտի լինեն կրկնակի և արանքները լավ լցված թաղիքի կտորներով, բամբակի թափթիփուկներով կամ ծղոտով (բելում) ու դրսի կողմից լավ սվաղած:

Լուսամուտները շատ փոքր չպիտի լինեն. նրանք պիտի լինեն յերկարած, արևահայաց, հատակից $1\frac{1}{2}$ մետր բարձրության, վորպեսզի այժը՝ չետևի վոտքերի վրա կանգնելուց չկարողանա չեղջուրներով կոտրել ապակիները: Այն ախոռներում, ուր 2—5 այժ են պահվում, լուսամուտները պիտի շինել 50 սանտիմետրից վոչ պակաս յերկարությամբ և 35 սանտիմետրից վոչ ավելի բարձրությամբ:

Յեթե ախոռն այնքան փոքր է, վոր նրա պատերից վոչ մեկում լուսամուտ բանալը հնարավոր չի, այդ դեպքում լուսամուտը դռն մեջ պիտի բանալ:

Վորպեսզի ախոռը ձմեռը չցրտի, ցանկալի յե դռնն առաջ մի փոքրիկ, լուսավոր սրահ շինել, ուր կարելի յե պահել կերի մի մասը, ամանեղենն ու այլ ինվենտարը:

Ձմեռն ախոռը տաք պահելու համար դռներին թաղիք, մորթի և այլ բաներ են խփում:

Յեթե անտեսությունն հավեր ունի, ապա ախոռում չպիտի պահել, վորովհետև հավերի պարազիտները (վոջիլները) անցնում են այժերին, վորոնց դեմ կովելը ձմեռը

դժվար է, իսկ այժերն այդ պարազիտներից սաստիկ նեղվում են և կաթը բշացնում:

Այժարուծական մեծ անտեսություններում այժերը սովորաբար ախոռներում են պահում՝ ազատ կամ կապած: Ախոռը շինում են 1 մետրից վոչ պակաս լայնությամբ և $1\frac{1}{2}$ մետրից վոչ պակաս յերկարությամբ ամեն մի այժի համար: Փոքր անտեսություններում ախոռներ չեն շինում: Գյուղացիական անտեսություններում այժերը տավարի հետ մի ընդհանուր գոմում են պահում՝ առանց կապելու, իսկ շատ անտեսություններում՝ այժերը մսուրների մոտ կապած են պահում: Սակայն, այնտեղ, ուր շինանյութը եժան է, ավելի լավ է ընդհանուր ախոռներ շինել և այժերն առանց կապելու պահել:

Ախոռներն, ըստ հնարավորության, պետք է մեծ շինել և յեթե այժերն իրար հետ չեն կովում, ամեն մեկում մի քանի հատ պահել, իսկ յեթե նրանք կովում են, անհրաժեշտ է ամեն մեկին առանձին տեղ հատկացնել, կամ կապած պահել:

Ախոռի առջևի պատը մեկ մետրից ցած չպետք է լինի և լավ կլինի, յեթե վանդակած շինվի, վորպեսզի կարելի լինի այժն ամբողջովին տեսնել: Այս պատը պետք է շինել իրար միացրած հանգույցներով կամ մեջտեղում մի փոքրիկ դուռ թողնել՝ ախոռը մտնելու համար: Վորպեսզի այժերն իրար հետ չկովեն, անհրաժեշտ է ախոռն ամբողջ յերկարությամբ տախտակով կտրել. տախտակի հաստությունը 2—2 $\frac{1}{2}$ վերջովից պակաս չպիտի լինի:

Վորպեսզի առանց ախոռը մտնելու և առանց այժերին անհանգստացնելու կարելի լինի նրանց կեր տալ, մսուրները պետք է շինել առջևի պատի վրա:

Մսուրի ճաղերն, ըստ հնարավորության, խիտ պետք է շինել և արանքներից թափվող խոտը հավաքելու համար տակն արկղ դնել:

Մսուրները շատ բարձր չպիտի շինել, յեթե վոչ խոտից թափվող փոշուց այծերի աչքերը կճառոտեն: Բացի այդ, մսուրի բարձրությունից մատղաշ կենդանիների մեջքերը կարող են ծովել:

Վորովհետև այծերը մաքրասեր կենդանիներ են և խոնավության բոլորովին չեն դիմանում, ուստի այն տընտեսութուններում, ուր այծերն ախոռներում են պահում, անհրաժեշտ է ախոռները սալահատակել խոնավություն չծծող բարերով, կամ յեթե ամբողջովին սալահատակել հնարավոր չի, կարելի յե ամեն մեկի վոտքերի տակ առանձին-առանձին սալեր կամ տախտակներ դնել: Իսկ գլուղական այն տնտեսութուններում ուր այծերն ընդհանուր ախոռներում են պահվում, անհրաժեշտ է պատերին կից, գետնից մոտ 1—4 (2—3 արշ.) մետր բարձրության վրա, 75 սանտիմետրից վոչ պակաս լայնությամբ և 1 մետրից վոչ պակաս յերկարությամբ թմբեր շինել՝ այծերի պառկելու համար: Վորովհետև այծերը սիրում են բարձր ու մաքուր տեղերում քնել և հաճախ, սալերի ու այլ բաների վրա յեն բարձրանում, ուստի վերջինները փշանալուց պաշտպանելու հետ մեկ տեղ թմբեր շինելն՝ այծերին հիվանդություններից կպաշտպանի, նրանց մաքուր պահելու հնարավորություն կտա և ցամքարի (փեյինի) խնայողություն կլինի:

Վորովհետև, ինչպես ասացինք, այծերը խոնավության բոլորովին չեն դիմանում ու խոնավ շինությունները մեջ հաճախ հիվանդանում են, ուստի, վորքան կարելի յե, ցամքար (փեյին) չպետք է խնայել:

Այծերի տակը կարելի յե փռել խոտի և դարմանի մնացորդ (կոճոն), թեփ, չոր տերևներ, վուշի և կանեփի խզուղ (կեղևանք) ծղոտ և այլն:

Այծերին պարագիտներից ազատ պահելու համար, ամառվա տաք յեղանակներին, յերբ կենդանիները գիշերը

կարող են դուրսը մնալ, մինչև աշուն ախոռի դուռն ու լուսամուտները պետք է բաց թողնել, հատակը մաքուր սրբել և աղբը դուրս թափել, ներսի կողմից պատերի ծեփը պակել և նույնպես դուրս թափել ու այսպես թողնել մինչև ոգոստոսի վերջը, վորից հետո պատերը նորից սվաղել:

Յեթե պատերը փայտաշեն են, լվանալու փոխարեն կարելի յե կրաշուով սպիտակեցնել: Կրաշուրը պատրաստելու համար վերցնում են 5—6 ֆունտ չհանգած կիր և լուծում մի դուլլի ջրի մեջ: Կրաշուրը պատրաստում են սպիտակացնելուց անմիջապես առաջ:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿԵՐԱԿՐԵԼ ԱՅԾԵՐԻՆ

Այծն ել, ինչպես և կովն ու վոչխարը, արածում է, կերակրվում է չոր խոտով, դարմանով, ամեն տեսակի տերևներով (խաղալ) հատիկներով (բամբակի հունդ), ալյուրով, թեփով, հացով ու բուռական այլ կերերով:

Տնային այլ կենդանիների հետ համեմատած, այծը սակավապետ է և կերի մեջ խտություն չի դնում, բավարարվում է կոշտ կերով, ծառերի դալար ճյուղերով, փշով, ավելով, յեղեգնով, դադձով և այլն, վոր խոտի պակասության ու թանկության ժամանակ մեծ նշանակություն ունի:

Ձմեռը, կապած պահելու ժամանակ այծերին գլխավորապես չոր խոտով են կերակրում: Ամեն մեկին որական $1\frac{1}{2}$ —2 կիլոգրամ խոտ է տրվում:

Այծերին իբրև կեր տված 4.5 կիլոգրամ կանաչ կամ $1\frac{1}{2}$ —2 կիլոգրամ չոր խոտ նրանց սնվելու ու գոյությունը պահպանելու համար միանգամայն բավական է բայց կաթ պատրաստելու համար—անբավարար: Կաթ պատրաստելու համար կաթնատու կենդանին զգալի բանակությամբ աննդարար նյութեր է պահանջում, վորոնք դարմանի և չոր խոտի մեջ քիչ են:

Ուստի՝ կթելու ժամանակաշրջանում տրվող հիմնական կոշտ կերին՝ կանաչ կամ չոր խոտին վորպես հավելում, կթի այծին պետք է տալ ավելի սննդաբար, այսպես ասած՝ «ուժեղ կեր» — թեփ, քուսպ, բամբակի հունդ, ալյուր, շիփթ, հաց և այլն:

Այծին ուժեղ կեր պիտի տալ համապատասխան նրա տված կաթի չափին: Այծից ստացվող ամեն մի լիտրը կաթի համար նրան պիտի տալ մոտավորապես $1\frac{1}{3}$ -ական կիլոգրամում ուժեղ կեր: Որինակ՝ յեթե այծը տալիս է 6 լիտր կաթ, բացի տրվող խոտի $1\frac{1}{2}$ -2 կիլոգրամում հիմնական կոշտ կերից, պիտի տալ նաև մոտ 2 կիլոգրամում ուժեղ կեր:

Այծերին կարելի չէ կերակրել նաև հետևյալ չափով. մոտավորապես 50 կիլոգրամում միջին հաշվով կենդանի բաշ ունեցող այծին պիտի տալ, կիլոգրամում հաշվով, կերի մեկ միավորի $\frac{3}{4}$ ի չափով ոժանդակ կեր, բացի այդ, այծից ստացվող ամեն մի 3 կիլոգրամում կաթի համար նաև մեկական միավոր (կիլոգրամներով) արդյունավետ կեր:

Որինակ՝ վերցնենք մի այծ, վոր միջին հաշվով 50 կիլոգրամում կենդանի բաշ ունի և 6 լիտր կիթ, նրան պիտի տալ.

Չ մ ե ո ը

Ոժանդակ կեր	կերի $\frac{3}{4}$ միավոր
Արդյունավետ կեր	» 2 »
Տալով այծին՝ ա) ձմեռ ժամանակ՝ $1\frac{1}{4}$ կիլոգրամում խոտհարբի	
լավ խոտ	» $\frac{1}{2}$ »
1 կիլոգրամում դարման	» $\frac{1}{4}$ »
$\frac{3}{4}$ » կտավհատի քուսպ	» 1 »
$1\frac{1}{3}$ » ալյուրի թեփ	» 1 »

Ա մ ա ո ը

Լավ արոտատեղ կերի մեկ միավոր

$\frac{3}{4}$ կիլոգրամում արևածաղկի կամ բնջիթի քուսպ	» $\frac{1}{2}$ »
Մեկ կիլոգրամում ալյուրի թեփ	» $\frac{3}{4}$ »
$1\frac{1}{2}$ » խոհանոցի ավել-ցուկ (լավ)	» $\frac{1}{4}$ »
$\frac{1}{4}$ կիլոգրամում հացի վշրանք	» $\frac{1}{4}$ »

Ընդամենը պիտի տալ կերի $2\frac{3}{4}$ միավոր, այսինքն կենդանուն անհրաժեշտ նորմայով:

Վորքան այծը կաթնավետ է, այնքան առատ, այնքան բազմազան ու սննդաբար պիտի լինի նրան տրվող կերը: Ամեն մի այծապահ, վոր ցանկանում է իր այծերից լավ կիթ ստանալ, պիտի հիշի այս և կթելու ժամանակաշրջանում, մանավանդ ծնելուց հետո, չպիտի խնայի կաթ շատացնող կերեր տալ, ինչպես որինակ թեփ, քուսպ, վորոնք կաթ դառնալով՝ իրենց ծախքը կհանեն:

Կերի մեկ միավորին հավասար է ստորևի բերված կերերից ամեն մեկի հետեվյալ քանակը.—

Մեկ կիլոգրամում դարի կամ ալյուր,	
$\frac{3}{4}$ » կտավհատի կամ լավ արևածաղկի քուսպ,	
$1\frac{1}{2}$ » շատ թեփ պարունակող բնջիթի կամ արևածաղկի քուսպ,	
$1\frac{1}{3}$ կիլոգրամում ալյուրի թեփ,	
$2\frac{1}{2}$ » լավ խոտ,	
3-4 » ճահճի խոտ,	
4 » դարնանացանի դարման,	
6 » աշնանացանի դարման,	
4 » կարտոֆիլ,	
10 » կերի ճակնդեղ (բազուկ)	
7 » լավ կանաչ խոտ,	

- 10 » վայրի լավ բազուկ,
12 » թարմ քուսպ:

Կթի այծերին պետք է կերակրել հետևյալ կերպով: Ձմեռը, բացի խոտից ու դարմանից, վորոնցից հարկավոր է որական ամեն մեկին տալ մոտ $1\frac{1}{2}$ —2 կիլոգրամ, պետք է տալ մի լավ բուռը թեփախառն գարի կամ հունդ ($\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$ կիլոգրամ) և արմատապտուղներ, յեթե տնտեսությունն ունի: Արմատապտուղներ տալը շատ ոգուտ է. դրանք համեղ ու հյութալի կեր են, այծերն ախորժակով են ուտում և բարեբար ազդեցություն են ունենում նրանց կաթնատվության վրա:

Ամենից ավելի գնահատելի յեն գազարն ու ճակնդեղը, բայց կարելի չի կերակրել նաև շաղգամով, մանսփանդ, վոր սրանց ցանքը շատ ձեռնտու յե—մեկ հեկտար (2197 բառակուսի սափեն) հողից 30.000—60.000 կիլոգրամ է ստացվում ($2\frac{1}{2}$ —4 հազար փութ մեկ դեսյատինից):

Աշնանն այծերին կերակրում են բանջարանոցների թափթփուկներով ու շուտ փշացող բանջարեղենով: Սրանցից հետո մի լավ բուռը հունդ կամ թեփախառն գարի յին տալիս:

Գարնանն ու ամառը, տաք յեղանակներն սկսելուն և խոտը յերևալուն պես, այծերն արտաի պիտի թողնել, վորովհետև խոտը կաթնատվության վրա շատ բարեբար ազդեցություն է անում:

Փոս, խոնավ տեղերում այծեր արածացնել չի կարելի, վորովհետև այդ արոտատեղերում այծերն հիվանդանում են լյարդախտով (քափանակ): Այծերն արածացնելու համար ավելի բարձր և չոր տեղեր պիտի ընտրել:

Կապած պահելու ժամանակ յերկու-յերեք անգամից պակաս կեր չպիտի տալ և պիտի տալ այնքան, վոր այծն առանց մնացորդներ թողնելու ուտի, այլապես՝ ձմե-

ռը, տխուր ժամանակ, այծը խաղ կանի և կերը վոտքերիտակ կթափի:

Կեր տալն ել այնպես պիտի լինի, ինչպես և կթելը. միշտ միևնույն ժամանակ, որինակ՝ առավոտյան ժամը 6-ին, ցերեկվա ժամը 12-ին և յերեկոյան ժամը 6-ին, վորովհետև վորոճալու և կաթ պատրաստելու համար վորոշ ժամանակ է պահանջվում: Ժամանակին չտված կերը կաթը քչացնում է:

Արմատապտուղներով ու բանջարեղեններով կերակրելիս անհրաժեհտ է հետևել, վոր դրանք լինեն մաքուր, առանց հողի, չսառած ու չբորբոսնած, այլապես այծերը կարող են հիվանդանալ:

Ձմեռը, կապած պահելու ժամանակ, այծերին, ճիշտ վորոշված ժամանակին, որական յերեք անգամ պիտի կերակրել: Առավոտյան պիտի տալ ուժեղ կերը՝ թեփ և քուսպ՝ կոտորած արմատեղիների հետ խառը, վորից հետո այծին մաքրել (թիմարել) ու կթել, այնուհետև ջրել ու խոտ տալ: Յերեկոյան պիտի տալ մի բաժին հունդ կամ վորևե հացահատիկ և ջուր, իսկ գիշերը մսուրի մեջ մի բաժին կոշտ կեր—խոտ կամ դարման պիտի դնել: Գիշերվա համար ավելի լավ է՝ համեղ, փոր չուռեցնող կեր տալ, իսկ բանջարեղենն ու լափը հարկավոր է ցերեկը տալ, յերբ անասունը շարժողության մեջ:

Այծերին պիտի ջրել գոլ ջրով, դրա համար ձմեռն անհրաժեշտ է ջուրը մի փոքր գոլացնել կամ գիշերը թողնել ախոռում: Անհրաժեշտ է նաև ջրի մեջ մի քիչ աղ գցել, կամ մսուրի մեջ մի կոոր աղ դնել:

Կերակրելուց հետո պիտի հավաքել կերի մնացորդները և լվանալ այն ամանը, վորի մեջ կեր է տված: Իսկ այծերին պիտի հանգիստ թողնել, վորպեսզի նրանք հնարավորություն ունենան վորոճալու և մաքսելու:

Վորպեսզի տնտեսություններն եժան և լավորակ կե-

բով ապահովեն իրենց, խորհուրդ ե տրվում նրանց միա-
նալ, ընկերություններ կազմել և միասին կեր գնել ու
մթերել: Վորքան ուժեղ լինի կոոպերատիվը, այնքան լավ
տնտեսությունները հնարավորություն կունենան եժան և
բազմապիսի կեր ձեռք բերելու:

ԱՅՄԻ ԽՆԱՄԲԸ

Այժը խելացի, շողմբոր և կովարար կենդանի չե,
միաժամանակ և մաքրասեր, — նրան խնամելը շատ հեշտ ե
ու հանգիստ: Շատ տնտեսություններում, բացի կթելուց,
այծերի պահելն ավելի շուտ ընկած ե հաճախ 8—10
տարեկան հասակի յերեխաների վրա:

Բացի այժին կերակրելուց և ախուր մաքրելուց,
անհրաժեշտ ե առնվազն շաբաթը մեկ անգամ նրան խո-
շոր սանրով սանրել և մաքրել կոշտ խոզանակով, յեթե
հնարավոր ե, ամեն որ, վորովհետե մաքրելը շնչառու-
թյունն ու արյան շրջանառությունն ուժեղացնում ե և
կաթնատվության վրա բարեբար կերպով ե անդրադառ-
նում:

Ամրան տաք չեղանակին, այժը կարելի յե խուզել և
լողացնել տաք ջրով ու կանաչ սապոնով: Լողացնելուց
հետո պիտի սրբել և չորացնել:

Ամեն անգամ կթելուց առաջ այժի կուրծք պիտի
լվանալ գոլ ջրով և մաքուր, չոր սրբիչով սրբել-
չորացնել:

Փարնանն ու ամրանն այժը պիտի կթել 3 անգամից
վոչ պակաս, իսկ աշնանն ու ձմեռը 1—2 անգամ: Պիտի
կթել մինչև վերջին կաթիլը, վորովհետե ամենայնուհետ
կաթն ամենից վերջն ե գալիս: Ամեն որ պիտի կթել
նույն ժամանակին, անժամանակ կթելը կենդանուն ան-
հանգստություն ե պատճառում և կաթնատվության վրա
բացասաբար ե անդրադառնում:

Կթելուց անմիջապես հետո կաթը պիտի քամել քա-
միչով կամ մաքուր, լավ լվացած ու ջրում յեռացրած
կտավով և բերանը բաց ամանով դնել սառցարան կամ
մի այլ հով տեղ, վոր սառչի: Չսառեցրած կաթը թթվում
փշանում ե: Կաթ պահելու տեղը մաքուր պիտի լինի և
ոգը թարմ, այլապես կաթին հոտ կկաչի և արժեք չի
ունենա:

Արոտ չեղած ժամանակ, յերբ այժը կապած ես պա-
հում, որվա ընթացքում մի քանի ժամ ազատ պետք ե
թողնել, վոր ման գա. նույնը պիտի անել նաև ձմռան
արև որերին:

Ձմեռն այծերի կճղակները յերկարում են, անհրա-
ժեշտ ե կտրել-հասցնել նորմալ դրության:

Հուլիսի յերկրորդ կեսից սկսած այծերի մեջ գուգա-
վորվելու ցանկություն ե առաջ գալիս: Այդ ժամանակ
այծն ախորժակը կորցնում ե և կաթը բշացնում: Այծն ի-
րեն անհանգիստ ե պահում, պառկում ե, անհանգիստ այս
ու այն կողմն ե նայում, պոչը ե թափահարում, սեռա-
կան դորժարաններից լորձյունք ե հոսում, յերբեմն՝ արյու-
նախառն, վոր տևում ե 36 ժամ, վորի ընթացքում այժին
պիտի գուգավորել: Լորձյունք դադարելուց հետո այլևս
գուգավորել չի կարելի և պիտի 3—4 շաբաթ սպասել,
յերբ նորից ցանկություն առաջ կգա:

Առհասարակ բեղմնավորելու համար մեկ անգամ գու-
գավորելը բավական ե, թեև շատ այծեր մի առժամանա-
կից հետո 1 կամ 2 կրկնակի գուգավորումն են պահան-
ջում:

Այծերի հղիությունը տևում ե 5 ամիս (145—155
որ), ըստ վորում, վերջին 2 ամսում նրանք մեծ մասամբ
կաթ չեն տալիս: Ուստի այն տնտեսություններում, ուր
տարին բոլոր կաթի միանման պահանջ ու մի քանի այծ
կա, անհրաժեշտ ե տարբեր ժամանակներում այծերին գու-

գալորել և զուգավորել այն հաշվով, վոր տնտեսությունը շարունակ կաթով ապահովված լինի:

Հղի այծերի հետ զգուշ պիտի վարվել և մեծ քանակությամբ բանջարեղեն, լափ և մեծածավալ, կոշտ, փոր ուռեցնող կեր չտալ, այլ, բոլոր հնարավորութիւն, կերակրել թեթեւ ու համեղ կերով, բայց շատ չուտեցնել, այլ ապես ծնելը դժվար կլինի:

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՊԱՅԵԼ ՈՒԼԵՐԸ

Այծերը հեշտ են ծնունդ և սովորաբար մարդու ոգնութիւն կարիք չեն դրում:

Ծնվելուն պես, ուլը դնում են մոր առաջ, վորպեսզի մայրը լիզի: Յեթե այծը չլիզի, ապա անհրաժեշտ է ուլին սրբել փափուկ շորով և դնել կողովի կամ արկղի մեջ՝ փափուկ խոտի վրա ու բերանը շորով կապել: Ծնելուց մի քանի ժամ հետո այծը պիտի կթել և կաթը խմեցնել ուլերին:

Ծնելուց հետո առաջին կաթը-խեղը մի ամբողջ շաբաթ պիտի խմեցնել ուլերին: Այդ ժամանակ այծերը որական 4—5 անգամ պիտի կթել: Յերկրորդ շաբաթից կաթելի յե որական 3 անգամ կթել:

Կթելուն պես կաթը անարատ, տաք տաք և հուլինիսկ մի բիշ ավելի զոլացրած պիտի խմեցնել ուլերին: Այս բանը պիտի անել շարունակ՝ 5—6 շաբաթ, իսկ աչնունետե արդեն կարելի չէ կաթի մեջ մի բիշ շուր խառնել ու այնպես տալ, հետո չել նրա փոխարեն գարու ալյուրի կամ թեփի շփոթ տալ և վորպես չոր կեր՝ փափուկ մանրացրած խոտ:

Փոքր տնտեսութիւններում չպիտի թողնել, վոր ուլերը ծծեն, այլ ապես նրանք շատ գլխացավանք կալատճառեն: Ավելի լավ է հենց սկզբից սովորեցնել, վոր ուլերը կաթն սմանից խմեն. բայց անհրաժեշտ է հետևել, վոր

ամանը մաքուր լվացած լինի. կեղտոտ ու անկանոն կերակրելու դեպքում ուլերը հիվանդանում են փորլուծով ու սատկում:

Յերկու ամսական ուլերն արդեն չոր կերը լավ են ուտում, այդ հասակից նրանց արդեն կարելի չէ կաթից կտրել և կերակրել սովորական ձևով: Սակայն, ազնվացեղ, տվելի արժեքավոր կենդանիներին, մանավանդ ուլերին, ցանկալի չէ 4—6 ամիս մոր կաթով կերակրել:

Վորովհետև կաթնատու թիւնը ժառանգական է, ուստի անհրաժեշտ է ամենակաթնառատ մայրերի ուլերը պահել:

Սրա վրա առանձնապես ուշադրություն պետք է դարձնել զուգավորելու ժամանակ, յերբ նրանք իրենց հատկութիւնները հարյուրավոր գլուխ մատղաշները չեն հաղորդում:

ԱՐՏԱԴՐՈՂ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրողները խոշոր նշանակութիւն ունեն:

Այծերին՝ մանր, չհասունացած արտադրողների հետ զուգավորելը պակասեցնում է ուլերի թիվը և ռաստիկ վատացնում թե՛ կենդանիների կազմվածքը և թե՛ նրանց արտադրողականութիւնը: Յերբ նոխար (արու այծը) կաթնատու, ֆիզիքապէս զարգացած ու հասունացած այծից է ծնված լինում, այն ժամանակ մատղաշների թիվը շատանում է, մատղաշը լավ տեսք է ունենում ու հրաշալի արտադրողականութիւն:

Լավ արտադրող ունենալով, 2—3 տարում կարելի չէ ունենալ գեղեցիկ արտաքին ունեցող այծերի մի ամբողջ հոտ:

Ազնվացեղ արտադրող մոր կաթով մեծացած ֆիզիքապես լավ զարգացած պիտի լինի, և ունենա ուղիղ մարմին, ուղիղ մեջք, լայն կուրծք և կոնք, ամուր և ուղիղ վոտքեր, լիքը ազդրերով և աշխուժ-առնական և իր

ցեղին հատուկ տիպիկ արտաքինով, բայց փոշ չար ու կրու-
վարար:

Ազնվացեղ արտադրողների համար ամենալավ հասա-
կը՝ 2—5 տարեկանն է, թեև զուգավորելու համար կա-
րելի յե ոգտագործել նաև 1—8 տարեկան հասակը:

Առհասարակ, ազնվացեղ արտադրողը շատ թանգ և
գնահատվում և միայն մի տնտեսութայն համար պահելը
ձեռնառու չի, ուստի խորհուրդ է տրվում հասարակական
բեղմնավորման կայաններ կազմակերպել, փորով հնարավոր
է լինում թանկարժեք արտադրողներ ձեռք բերել ու աշ-
ծելին հժան գնով զուգավորել:

Մեկ նոխաղը կարող է 80—100 գլուխ այծ զուգա-
վորել, բայց 25—30 այծ ունեցող գյուղերում հարկավոր
է ունենալ 2 նոխաղից փոշ պսկաս, մեկը՝ մեծ, 2—5
տարեկան, իսկ մյուսը՝ մոտ մեկ տարեկան, փորպեսզի
մեկի հիվանդութայն ու սատկելու դեպքում, մյուսը նը-
նրան փոխարինի:

Ազնվացեղ նոխաղ ընտրելու համար պետք է գար-
նանը, այծին արտի հանելուց առաջ, բոլոր մատղաշ ու-
լերին լավ նայել ու հետազոտել և ընտրելիքից յերկու-յե-
րեքը ջուկել՝ ցեղն ազնվացնելու համար: Մնացածին պիտի
ամորձատել (կտտել), փորպեսզի նրանք մյուսներին չը-
խանգարեն ու լավ գիրանան:

Յեղն ազնվացնելու համար ընտրած ուլերին առան-
ձին, փոքր հոսերով պիտի պահել և այգիներում ու պար-
տեղներում արածացնել կամ ընկերութայն անդամներից
մեկին պահ տալ: Արտի կանաչ խոտից զատ, նրանց ու-
րական պիտի տալ նաև մի լավ բուռը թեփախառն կամ
բուսապախառն գարի կամ հունդ (ամեն մեկին մոտ $\frac{1}{2}$ կի-
լոգրամմի հաշվով):

Աշնանը, յերբ ուլերը մեծանան ու զարգանան, նը-
նրանց նորից պիտի լավ նայել ու հետազոտել և սերունդ

արտադրելու համար ամենալավը ջուկել ու պահել: Մնա-
ցածները, յեթե ցեղն ազնվացնելու համար ծախել հնարա-
վոր չի, պիտի ամորձատել և գիրացնել մորթելու համար:

Մատղաշ նոխաղին 9—10 ամսից շուտ չպետք է զու-
գավորման թողնել:

Ամեն որ, արտից վերադառնալիս, նոխաղին մի լավ
բուռը գարի կամ հունդ պիտի տալ ու գիշերելու համար
հարմար տեղ, կարելի յե տալնաև մի բուռ աղախառն հացի
փշրանք: Այս բանը նրան կտվորեցնի ճշտությամբ տուն
վերադառնալուն ու կպահպանի նրա ուժերը:

Ազնվացեղ նոխաղներին որական $\frac{1}{2}$ — $\frac{3}{4}$ կիլոգր-
րամմ ուժեղ կեր՝ գարի, հունդ, թեփ կամ բուսաղ պիտի
տալ:

Յեթե նկատվի, փոր լավ պայմաններում վատ ուլեր
են ծնվում, այսինքն՝ վատասերում է նկատվում, նոխաղը
պիտի փոխել և ուրիշ ընկերութայններից նորը բերել:

Յեթե յերկար ժամանակ արշունը չթարմացվի, ապա
արենակցական բուծումը վատ կանդրադառնա այծերի վը-
րա: Նրանք կվատասերվեն, ու զգալիորեն կնվազի արտա-
դրողականությունը:

Այս իսկ պատճառով էլ անհրաժեշտ է 2—3 տարին
մեկ անգամ նոխաղը փոխել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այժի բարձր արտադրողականությունը, նրա վաղա-
հասութունը, համեմատական եժանությունը, խնամքի ու
կերի նկատմամբ առանձնապես պահանջկոտ չլինելը, նրան
գարձել են գլուգացիական տնտեսությունների համար սի-
րելի կաթնատու կենդանի:

Մեզ մոտ, ԽՍՀՄ-ում ևս ինչպես և ար-
տառահմանում, վերջին ժամանակներս սակավահող գյու-
ղացիներն ու ֆարերկա գործարանային բանվորները, ար-

նայնադրժներն ու յերկաթուղային ծառայողներն սկսել են մեծ թվով այժեր պահել, և կաթնատու այժարուծությունը սկսում է անասնաբուծության մյուս ճյուղերի մեջ աչքի ընկնող տեղ գրավել:

Սա այն, մեր անկուլտուրականության, վատ կերակրելու, կեր, արտատեղեր ու արտադրողներ չունենալու պատճառով ու մեր տնտեսությունների բաժան-բաժան լինելու հետևանքով մեր այժարուծներն իրենց այժերից չեն ստանում այն, ինչ կարող ելին ստանալ:

Տեղական այժի վրա լավ ուղադրություն դարձնելը, պահելու և կերակրելու միջոցով նրան լավացնելը, այժարուծական ընկերություններ ու կոոպերատիվներ կազմակերպելը, լավագույն արտադրողների բեղմնավորման կախաններ հիմնելը, կերի կոոպերատիվ հայթհայթումն ու մթերումը, կաթնամթերքների ու իրենց իսկ կենդանիների ըսպառում կազմակերպելը— ահա թե ինչ են հրաժայողաբար պահանջում ներկա մոմենտի պայմանները, և ինչը պետք է լինի Հայաստանի բոլոր այժարուծների անհետաձգելի անելիքը:

Բոլոր ասածներն իրականացնելու դեպքում, հնարավոր կլինի ոգտագործել այժի բոլոր գնահատելի հատկությունները: Այդ դեպքում միջին Հայաստանի այժարուծությունը կըրվի այնպիսի բնորոշության վրա, ինչպիսի բարձրության վրա որից յեկեղներում և գտնվում, և այժը իր պահողներին ու կերպից զգալի ուժգուտ կտա:

17. Ռ. Արմենյաց.— Խոշոր յեղջյուրավոր անասունների ժանտախտը 15 »
18. Հ. Ազատյան.— Գյուղատնտեսական բանվորությունը և միջազգային կոմմունիստական շարժումը 40 »
19. Ն. Խան-Աղյան.— Ուղեկցույց արդյունավետ խոզաբուծության 15 »
20. Ֆերդինանդով.— Հավաքում. և նրա ոգուտն. 20 »
21. Ա. Դանելբեգ.— Լավ և ուշ, քան յերբեք (ազրո-պիլես) 20 »
22. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.— Կտավատը և կանեփը 20 »
23. Ս. Լուկաճի.— Անդրկովկասի տնտեսական զրույթյունը 15 »
24. Հրահանգ Հայաստանի Խ. Ս. Հանրապետության անհատներից փայտեղեն բաց քողենելու համար (պաշտոնաան) 20 »
25. Պրոֆ. Ս. Վ. Քալանթար.— Կաթնատու կովի կերակրումը 30 »
26. Ս. Ս. Տրիֆոնով.— Ինչու պետք է ցելը շուտ անել 15 »
27. Ս. Բակուց.— Գալուստի վիկը (ազրո-պատմվածք) 15 »
28. Ս. Բակուց.— Կարտոֆիլի մշակությունը 20 »
29. Լ. Սուբբոնի.— Կովի դատը (ազրո-պիլես) 20 »
30. Կ. Կ. Մելիք-Շահնազարյան.— Տիգկանիփ 5 »
31. Խ. Տեր-Ներսիսյան.— Պտղատու ծառերի քրատտուններն ու հիվանդությունները 25 »
32. Խ. Ավգալբեգյան.— Գյուղի հողաշինարարությունը 20 »
33. Ս. Բաղի.— Տրակտորը (ազրո-պատմվածք) 15 »
34. Ֆալսացի.— Խորհրդավոր տրոտնիներ (ազրո-զրույց) 15 »
35. Խնկո-Ապեր.— Գյուղատնտես-անասնաբույժը և իր ազրո-զրույցը 20 »
36. Ս. Ֆրիզուի.— Տասը պատգամ անասնապահին (բ. տպագր.) 20 »
37. Մ. Խանգազյան.— Մեղվաբուծության գրական ձեռնարկ

38. Արամայիս Յեզգեկյան. — Մեր գյու
թյան հերթական խնդիրներից

39. Ս. Աբահադյան. — Գութան, թե՛ արոր — 5 »

40. Վ. Բոյկով — Այժմ աղքատի կոփն ե՛ — 20 »

ՏՊԱԳՐՎՈՒՄ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Պ. Քալանթարյան. — Գումաղըի նշանակությունը
պարարտացման գործում

2. Իս. Յեռ. Ներսիսյան. — Գումաղըը (տպագրվում է
Մոսկվայում)

3. Ի. Կուզնեցով. — Լենինը և գյուղացիությունը
ԴԻՄՆԷ՝ Յեռեվան, Հողժողովումատ՝ Հրատարակչության
Պետերատի կենտրոնական յեվ
գավառական գրախանութներին,
Գավոռըաժիններին: